

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՂԷՊ, 15 ՍԵՊՏ., 1930

ԹԻԻ 16

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԸՆԿԵՐԱՎԱՐԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԹՈՅՆԵՐ ԵՒ ԹՈՒՆԱՌՈՐՈՒՄ

ՈՒՂԵՐԶ

ՀԱՂԷՊԻ ՔԷՄՓԻ ՀԱՅ ԱՒԵՏ. ԵԿԵՂԵՅԻՆ

ՀԱՅԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

ՎԵՐ. Ա. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՓՐՈՖ. Յ. ԳԱՅԱՆԱՆ

ՎԵՐ. Կ. ՔԷԹԷՆՃԵԱՆ

ՆՕԹԱԳՐԵՑ Տ. Ճ. Խ.

ԱՅԼԵՒԱՅԼ

ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԻՆՉ Է

ՀԻՒԱՆԴ ԾԵՂ ՄԸ

Ն. Ի. ԲԻԼԻՅ ԵՒ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ

ՈՉՆՉԱՑՈՒՄ ԿԱՄ ՆՈՒԱՃՈՒՄ

«ՏՀԸ ԴՐԻՍՉԸՆ ՈՒՐՐԸՏ»

ՎԵՐ. ՈՒ. ՓԻՔԷԹ

«ՍԻՈՆ»

ՏՐ. ՓԷՆԵԹԸՐ

ԼՈՒՐԵՐՈՒԲԱԺԻՆ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈՂԷՃ ՀԱՂԷՊ

“ՊՕՅԶ ՀԱՅ ՍՔՈՒԼ”Ի

1930-31Ի ՏԱՐԵՇՐՁԱՆԸ

Հաստատութիւնս այս տարի պիտի բաղկանայ երեք անջատ դպրոցներէ։ Առաջինը պիտի պարունակէ նախակրթարանի բարձրագոյն կարգերը (Junior High School), Իրկրորդը՝ Գոլէճի նախապատրաստական կարգերը և երրորդը՝ Գոլէճի կարգերը, իւրաքանչիւրը՝ իւր սեփական շէնքին մէջ։

Տիար Ֆարաճուլլահ Էյլուպ, Պէյրութի Ամերիկեան համալսարանէն ուսումնաւարտ և վերջին վեց տարիներէ ի վեր նոյն հաստատութեան մէջ օգնական ուսուցիչ քիմիագիտութեան, պիտի աւելնայ ուսուցչական մարմինն վրայ։

Գրադարանի և քիմիագիտական աշխատանոցին համար նոր տեղեր յատկացուած են։

Այս տարի Գոլէճի կարգերուն աշակերտներէն պիտի պահանջուի որ իրիկունները դպրոցին մէջ կանոնաւոր սերտողութեան ժամանակ տան։

Գիշերօթիկ բաժնին մէջ այս տարի սակաւաթիւ աշակերտներ պիտի ընդունուին, հետեւաբար փափաքողներ անմիջապէս պէտք է դիմեն տնօրէնութեան։

Նախապատրաստական բաժնին մէջ հինգերորդ կարգին դասերուն վրայ պիտի աւելցուի տարրական քիմիագիտութիւն։

Մուտքի քննութիւնները պիտի կատարուին Սեպ. 25. 27ին, արձանագրութիւնք և վճարում՝ Սեպ. 29. 30ին, և դպրոցը պիտի բացուի Հոկ. 1ին։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ Է

ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅ ԱՒԵՏ. ՄԻՈՒԹԵԱՆ
1930Ի ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

որ 100 էջերէ բաղկացեալ գիրք մըն է, և կը պարունակէ Վեր. Մ. Կ. Փափագեանի կողմանէ տրուած Միութեան տարեկան քարոզը, Ս. Հոգիի վրայ զրուած ութը ճառեր, կարգացուած Տր. Ճ. Մէրլիլ և Միութեան 7 հովիւներու կողմանէ, տրուած որոշումներ և առնուած քայլեր, զանազան մասնախումբերու տեղեկագրութիւններ։ Պատմական արժէքին և հոգևոր ճոխ պարունակութեան համար կ'արժէ որ ամէն անհատ հատ մը ունենայ այս հատորիկէն, մանաւանդ որ չատ չափաւոր գին մը ունի, 15 դրուշ Սուրիական կամ 3 Թրանսական Թրանգ։ Ստանալու համար գիմիւ,

Rev. S. S. Manougian
c/o Eglise Prot. Arm.
Alep, Syrie.

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՒԷՊ, 30 ՍԵՊՏ., 1930

ԹԻԻ 16

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲՆՈՐՈՇԻՉ ԳԻԾԸ

3. ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԸՆԿԵՐԱ. — ԲԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Հայ ցեղը՝ նկատի առնելով իր միջա-
վայրը և բազմաթիվ իր զրաքներուն՝
բնագրային զօրաւոր մղում մը ցոյց տը-
ւած է ազատ կեանք մը ապրելու հա-
մար. անոր հոգին ազատատենջ ձգտում-
ներով խմորուած է: Հայկի և Բելի ա-
ւանդութիւնը լաւագոյնս կը ցոյցնէ
Հայուն այս ոգին: Հայց. Եկեղեցին,
հաւատարիմ իր ժողովուրդին ոգիին,
հին եկեղեցիներու մէջ ամենաազատա-
կանը եղած է իր վարչութեամբ իր վար-
դապետութեամբ և քաղաքականու-
թեամբ: Սակայն, այս ընդհանուր գիծը
պահելով հանդերձ, նոյն տասնամեակ-
վանիկա չէ ցոյց տուած իր պատմու-
թեան բոլոր շրջաններուն միջոցին:

Հայց. Եկեղեցին Լուսաւորիչի օրէն
սկսեալ մեծ ազդակ մը եղած է Հայ ըն-
կերային և պետական—քաղաքական
կեանքին մէջ, ունենալով իր որոշ ուղ-
ղութիւնը ու նշանակէտը և յաճախ ընդ-
դիմանալով արքունիքի ղեկավարնե-
րուն: Հայ Թագաւորութեան ջնջումէն
վերջ անիկա դարձաւ միահեծան իշխանը
Հայ կեանքին: Հոս պէտք է խոր յար-
գանքով յիշել Հայ եկեղեցականութեան
կատարած անհուն ծառայութիւնն ու
զոհողութիւնը այս մարզին մէջ՝ երբ Հա-
յութիւնը անհովիւ թշուառ ոչխարնե-

րուն վիճակին մատնուած էր: Իրերու
բնական ընթացքը, սակայն, ծնունդ
տուաւ կղերական զրութեան մը տի-
րապետող կրօնական դասակարգի մը
Հայ իրականութեան մէջ:

ԺԹ. դարուն մէջ Թուրքիոյ Հայու-
թիւնը ինքզինքը ներքին և արտաքին
ճնշումներու տակ կ'զգար, որոնցմէ ա-
զատելու համար տեական ուղարումներու
մէջ գտնուեցաւ: Կղերական և ամիրա-
յական—աղայական դասակարգը միահե-
ծան կ'իշխէին Հայց. Եկեղեցիին մէջ մաս-
նաւորապէս և Հայութեան մէջ ընդհան-
րապէս, յաճախ հակառակ շարժելով
եկեղեցական և ժողովրդային շահերու
դէմ: Միեւնոյն ատեն Հայ ցեղը և
Հայց. Եկեղեցին օտար ցեղի մը ճնշիչ
լուծին տակ կաշկանդուած՝ չէին կրնար
պէտք եղած չափով մեծնալ և զարգա-
նալ: Հայութիւնը այս երկու ճնշումնե-
րէն ազատելու համար պայքարեցաւ:
Ներքին ճնշումին, կղերա—աղայական
տիրապետութեան դէմ պայքարը ծնունդ
տուաւ Ազգային Սահմանադրութեան,
իսկ արտաքին ճնշումին դէմ մղուած
պայքարը, մէջտեղ բերաւ ազատագրա-
կան քաղաքական կուսակցութիւնները:
Մեր նպատակէն դուրս է երկրորդին մա-
սին խօսիլ:

Աւետարանական շարժումը երբեք ի-
րեն նպատակ ըրած չէ ռամիւսավարական
կարգի հաստատել. ասիկայ արդիւնք
մը եղած է ոչ թէ նպատակ. ժողովուր-
դապետութիւնը աւետարանականու-
թեան բնոյթին մէկ բնական ծնունդն է:
Աւետարանականը հաւատարիմ մնալով
Աւետարանի ուսուցումին կը խորհի թէ

մարդիկ մէկ Հօր զաւակներն են, հաւասար իրաւունքով եղբայրներ, մէկ Տիրոջ ծառաներ և բարեկամներ, կը խորհի թէ Բրիստոսի առջև տիրապետող և հպատակող դասակարգեր գոյութիւն չունին, բոլորն ալ հաւասար իրաւունքով կամաւոր զործակիցներն են Բրիստոսի, որ չի ճանչնար գերի, ծառայ և կամ տէր: Աւետարանի գերագոյն միակ պատգամն է Փրկիչը, և Սնոր միջոցաւ թշուառ մարդկութեան փրկութիւնը: Բայց ուր որ Աւետարան երթայ իր հետը կը տանին նաև աշխարհը յեղափոխող սկզբունքը թէ մարդիկ հաւասար իրաւունքով եղբայրներ են: Հետևաբար աւետարանականութիւնը կ'ընդգլխի ունէ տիրապետող դասակարգի գոյութեան, նաև կղերապաշտ վարչաձեւի մը գոյութեան: Ինչո՞ւ սակայն:

Հոս, ժողովրդապետութեան գաղափարին մէջ, աւետարանականը իր հայեցակէտով կը տարբերի աշխարհիկ մշտայնութեան տէր ազատականէն: Աւետարանականը բոլոր իրերը և գէպիւրը կը դիտէ հոգեւոր հայեցակէտէ, և ասոր համեմատ արժէք կուտայ անոնց: Աւետարանականը համոզուած է որ անհատական և հաւաքական հոգեւոր կեանքը առողջ կերպով կը ծնի, կը զարգանայ, առողջ արդիւնքներ կ'արտադրէ երբ մարդիկ իրենք զիրենք ունէ ճնշիչ կաշկանդումներէ ազատ կ'զգան իրենց խղճին, մտքին և գործունէութեան մէջ: «Դուք ազատութեան կանչուած էք» կ'ըսէ Պօղոս Առաքեալ:

ԺԹ. դարուն սկիզբը Հայ ժողովուրդին ներքին կեանքը ասոր հակապատկերը կը ներկայացնէր, և շատ չանցած այս վիճակէն դժոյզ տարրերու մէջ խլրտուումներ սկսան: Աւետարանական շարժումն մէջ այս ժողովրդապետական սկզբունքը կարևոր տեղ մը զբաւած է, Հայ Աւետարանականութեան առաջին սերունդին պատկանող մեծագոյն առաջ-

նորդներէն մէկը առթիւ մը սապէս ըսած է. «Մենք երբեք չենք ուզիր անգամ մ'ալ ետ գէպի կղերի տիրապետութիւնը երթալ»:

Այս ազատական ժողովրդապետական շարժումը սակայն, միայն Հայ Աւետարանականութեան մէջ չառհասնափականեցաւ: Հայց. Եկեղեցիին ծոցին մէջ ևս ծաւալեցաւ ան, թէպէտ աւելի չափաւոր և ուշ և ոչ-կրօնական շարժառիթով, և վերջապէս 60ական թուականներուն ծնունդ տուաւ Ազգային Սահմանադրութեան: Շատ իրաւացիօրէն դիտել տրուած է թէ Ազգային Սահմանադրութիւնը իթէ շատ կանուխէն հրաշակուած ըլլար՝ Աւետարանական շարժումը թերեւս տարրերը ընթացք և և կը կ'ունենար:

Հայ Աւետարանականը կը հաւատայ թէ ամէն անհատին խիղճը, միտքը և կամքը արթուն, գործօն և հետաքրքիր պէտք է պահուի, չնհրկւով որ սակաւաթիւ անհատներ կամ ունէ դասակարգ մը միայն խորհի և գործէ: Ան կը հաւատայ թէ ունէ Եկեղեցիին այնքան կենսականութիւն և արդիւնաւոր գործունէութիւն ցոյց կուտայ որքան որ ան հաւատարիմ կը մնայ ժողովրդապետական սկզբունքին, և կը մզէ ամէն անհատը որ սիրայօժար իր բաժինը բերէ հոգեւոր հաւաքական կեանքի կերտումին:

ՈԶՆՉԱՅՈՒՄ ԿԱՄ ՆՈՒԱՃՈՒՄ

Կրնայ ըսուիլ թէ ներկայ դարը իր նմանները շատ քիչ ունի Եկեղեցական Պատմութեան մէջ: Վերածնունդի շրջանը (Ռենէսանս) ասոնցմէ մէկն է, որ ինչ մէկն է առաջին (առաքելական) դարը: Քսաներորդ դարը քրիստոնէական կրօնքին կամ վերականգնումը և կամ վախճանը պիտի տեսնէ: Բոլոր աշխարհը նուաճել կամ ոչնչանալ, ահա Եկեղեցիին առջև գտնուող երկու ելքեր: Որոնցմէ մէկը կամ միւսը միայն պիտի պատահի:

ՏՐ. ՈՒ. Ա. ՓԷՅՆԹՐ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԹՈԹՆԵՐ ԵՒ ԹՈՒՆԱՒՈՐՈՒՄ

Անցեալ տարի Հալէպէն Տոգ. Ա. Ծէպէճեան «Նոր Աւետարան» 3, 5, 7, թիւերուն մէջ «Թոյներ եւ Թունաւորում» վերնագրի տակ իր յօդուածներով Սուրբ Հոգւոյ տաճարը եղող մեր այս մարմինները թունաւորելէ մեզ զգուշացուց: Բարգիլի տոգթորը արտաքին մարդուն մէջ ինչ որ կը կատարուի մասնագիտօրէն լացատրած էր:

Եթէ մարդս լոկ մարմնային արարած մը ըլլար, անոր վերաբերող կանոնները ուսումնասիրելով պիտի բաւականանայինք, սակայն նա հոգի եւ ըլլալուն՝ հոգին սպաննող մանրէներէն եւ թոյներէն ալ զգուշանալու ենք:

Մեր մարմինը կործանող թոյներու մասին շատերու տեղեկութիւնը սահմանափակ եղած է, նոյնպէս Աստուծոյ յաւիտեանականութեան, հոգիի եւ Սուրբ Դրբի կարեւորութիւն չառաջնորդուն ալ՝ հոգին սպաննող թոյներու մասին ունեցած գիտութիւնն թերի է, վասն այնորիկ մեր այս գրութեամբ հոգին թունաւորող մանրէները ուսումնասիրելով պիտի աշխատինք անոնցմէ ազատելու միջոցը անգամ մը եւս յայտարարել:

Կեանքի մէջ սա իրողութիւն է որ մինչ մեր մարմինը փնտռող Արեւելի, Սիւպրալի եւ Մօրֆիլի նման թոյներ խըմելէ կ'զգուշանանք, անդին մեզմէ շատեր մեր հոգին սպաննող տակարացնող թոյնի գաւաթը կոնծելէ հաճոյք կ'զգան: Մեր Տէրը այս թունալից մանրէներուն բնակութիւնը մարդու մէջ ըլլալը խօսելով անոնցմէ ոմանց՝ «չար խորհուրդներ, շնութիւններ, սպանութիւններ, դողութիւններ, ազահութիւններ, չաբութիւններ, նենգութիւն, գիծութիւն, չար աչք, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն» ըլլալը խօ-

սած է: Սա եւս ճշմարիտ է որ մեզմէ շատեր շնութեան, սպաննութեան եւ զոութեան նման մեղքերէ չթունաւորուելու համար կ'զգուշանան, բայց ինչ ինչ մեղքեր կան զորոնք իբր անոյզ գեղահատ կը կլինք եւ անոնց թունաւորիչ ըլլալն անգամ չեն զգար: Զորորինակ սուտին թունաւորող օձ մը ըլլալը կը մոռնանք, մինչ կատակի համար խօսուած մէկ սուտն ու հայհոյանքը մեր հոգիները թունաւորելու բաւ են: Նոյնպէս անհաւատութեան եւ սկեպտիկութեան թունաւորիչ մանրէներուն բազում հոգիներ կործանելը յայտնի է: Այսօր այս մանրէն շատ մը երիտասարդներու, դաստիարակներու, հոգեւորներու հոգիները թունաւորելէ յետոյ՝ մեր ազգին կեանքին մէջ ալ կը ներդրած են: Ո՛հ մեր հոգեւոր կեանքը փճացնող այս թունաւոր մանրէներու լէզէնները մարդկութեան օրտին եւ կեանքին մէջ ինչ զարմանալիօրէն բազմանալու վրայ են:

Տոգ. Ծէպէճեանի յօդուածէն հասկըցանք որ մէկու մը աղետալից թոյն եղող նիւթ մը ուրիշ մէկու մը օգտակար սնունդ կ'ըլլայ: «Աւելի զարմանալին սակայն սա է որ միեւնոյն կենդանի մարմնոյ մէջ միեւնոյն նիւթը, նոյն մարմնոյ տարբեր մասերէն եթէ ներմուծուի՝ մէկ մասին մէջ թունաւորում չառաջ կը բերէ իսկ միւս մասին օգտակար սնունդ կը ըլլայ»:

Սակայն հոգին սպաննող թոյներու մէջ այդ յատկութիւնը չկայ, հոգեւոր թոյնը՝ ներքին մարդուն որ մասին մէջ ալ մտնէ հոգին կը թունաւորէ: Ո՛ր հոգիին մէջ որ կը պատուաստուի զայն կը կործանէ:

Ասալ զարմանալի է որ հոգիին թունաւորուելովը մարմինն ալ իր հանգրստութիւնը կը կորսնցնէ: Ներքին մարդուն թունաւորումով արտաքին մարդն ալ կը տանջուի: Տե՛ս սա երի-

տասարգը, դառախարակուած, հարուստ
և զօրաւոր է ան, շատերերոնի կը կար-
գան անոր: Բայց աւա՜ղ ժամանակ մը
վերջ, դաւկահար գէմքով՝ զոգչողացող
ծուռներով և զուռնատ աչքերով մահ-
ուան կ'ապստէ, պատճառ իր արարիչը
մուցիւր, իր հաճոյքներով ապրիւր, և մե-
զանչիւր է...

Երեւ զարմանալի են այս մահացու
մանրէները, երբ անոնք մարդուն մէջ
կը ներգործեն ուրախը՝ տխուր, զօրաւ-
որը՝ տկար, անոյշը՝ լեզի, խելացին՝ ան-
խելք, սիրողը՝ տառա, շինարարը՝ աշ-
խարհապաշտ, ազգասէրը՝ ազգատեաց,
վերջապէս մարդը՝ անասուն, և հրեշտա-
կը սատանայ ընելու բաւ են:

Մեր հոգիները թունաւորող մեղքի
այս մանրէները ըստ միջավայրի կը
մեծնան կը բարդաւածին և կամ կը
նուազին: Եւ շատ ալ փոխանցիկ են՝
նաեւ շփացիկոտ. թոյլատրուած տեղերին
նախ իրենց քիթը կը խոթեն յետոյ կը
տեղաւորուին:

Շատ ալ յամառ են, երբ անգամ մը
կեանքիդ մէջ տեղաւորուեցա՞ն, տարի-
ներով, երբեմն մինչեւ կեանքիդ վերջը,
մինչեւ իսկ ըսեմ քեզի, յաւիտեակա-
նութեան մէջ օձիկդ թող չեն տար:

Զարմանալի չէ՞ որ բազում մարդիկ
այս կործանանար թոյնի գաւաթը ամե-
նայն գոհունակութեամբ ըմպելու վրայ
են: Մարդկութիւնը թունաւորուած է
կը մեռնի...: Եւ Պօղոս Առաքեալի
հետ հագեւին կը գոչէ «Ո՞վ զիս պիտի ա-
պառտէ այս մահկանացու մարմինէն»:

Ուրախ ենք ըսելու որ զիտական աշ-
խարհի մէջ բժշկութիւնը հակայաքայլ կը
յառաջանայ՝ ու իր կարգին հրաշքներ կը
գործէ, բայց մինչեւ ցարդ կարելի չէ ե-
ղած թոքախտի, սրտի ցաւի և յօղացաւի
նման հիւանդութեանց կատարեալ դեղ-
թափը գտնել, իսկ մեր հոգեւոր կեան-
քին վրայ յարձակող և մեր հոգիները
սպաննող մանրէներու դեղթափը զըտ-

նուած է, այդ հրաշալի բաւասանը Յի-
սուսի անձին մէջ կը գտնենք. «Ամէն ով
որ անոր հաւատայ պիտի չկորսուի,
հապա յաւիտեական կեանք պիտի ու-
նենայ»:

Մեղքի մանրէներէն թունաւորող
հոգիներու համար ստորեւ կը գծենք դե-
ղագիր մը որ Աթոս Էնոնէն զրկուած՝ ու
Տէր Ներսէս Առաքելեանի կողմէ Ռու-
մաներէնէ թարգմանուելով «Սիրոն»-ի
զրկուած է:—

«Հոգեւոյ բժշկութեան համար պէտք
է, 10 կրամ հաւատք,

18 » Յոյս,

72 » Սէր,

8 » Համբերութիւն,

19 » Երկիւղ Աստուծոյ:

Այս հինգ տեսակ դեղերը գնէ Ամենա-
կալի դեղարանէն, մանրէ գանոնք հնա-
զանգութեան սանդիւն մէջ, սեցուր դա-
նոնք Աստուածածանաչողութեան մաղով
և մտածութեան յանդիմանութեամբ, և
սեցուր գանոնք խոնարհութեան պտու-
կին մէջ, մոռացողութեան ջուրով,
խառնէ գանոնք ինքնամփոփման դգա-
լով, մաղէ գանոնք խելամտութեան կը-
տաւով և յետոյ խմէ գանոնք շնորհա-
կալութեան բաժակով:

Յետոյ փոխ՝ անկողնիդ մէջ բարի ու-
նակութեանց սաւանը, ծածկէ վրադ խո-
նարհութեան ծածկոցով, հեռատեսու-
թեան բարձն գլխուդ տակը առած և
ինքնազրկողութեամբ չարին քրտինքը
հանելէն ետք, չփէ ինքզինքդ հանդար-
տութեան ասուեակով և ապա լաւ մը
հագուէ՛ բարի ունակութեանց զգեստ-
ներով:

Եւ կատարելապէս առողջանալու հա-
մար համբերութեան տերեւները հաւաքէ,
խոնարհութեան ծաղիկները ժողուէ, հե-
ղութեան սերմերն ամբարէ, յաճախիկ
աղօթելու ճիւղերն ա՛ռ:— Յետոյ այս
բոլորը ինքնազսպութեան պահօք չոր-
ցուր, և մանրէ՛ բարի մտածողութեան

դանակով, զիր զանոնք իմացականու-
թեանդ յանդիմանութեան սանին մէջ,
վրան արցունքի ջուր թափէ՝, ծածկէ՝
զանոնք հեղութեան կտաւով, փաթթե-
լով ինքնագոհութեան ճիւղով, բացա-
վառէ՝ սիրոյ կրակով և խաչէ՝ զանոնք
հնազանդութեան լուծին ներքեւ։ Յե-
տոյ պարպելով զանոնք բարին իմանալու
բաժակին մէջ, խմէ՝ աներկիւզ հաւատա-
քով։

Ո՛վ մեղքէ թունաւորուած հո՛գի ու
որ ալ ես, եթէ կեանքի այս վիճակէն
չանցնիս չպիտի ապաքինիս, թոյնիդ
դեղթափը՝ Յիսուս, միայն Յիսուս է։
Քիսապ-Քորֆյունե Ա. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՈՒՂԵՐՁ

ՍԻՐԵԼԻ

ԵՂԲԱՅՐԵՐ ԵՒ ՔՈՅՐԵՐ Ի ՔՐԻՍՏՈՍ,

Գերազանց հաճոյքով տեղեկացայ,
որ պատկառելի Սառն Ժողովոյ վայելուչ
մէկ կարգադրութեան համաձայն, մեր
համայնքը ընդունելութեան երեկոյթով
մը պիտի տօնէ՝ մեր եկեղեցիին սիրեցեալ
հովիւին՝ Վեր. Հ. Յ. Համբարձումեանի՝
բարեբաւոտիկ վերագործը Ամերիկայէն։

Խորապէս կը ցաւիմ որ այդ հոգեպա-
րար երեկոյթին պատճառելիք անխառն
հրճուանքներէն զրկուած պիտի մնամ
բացակայութեան պատճառաւ։ Բայց
առտիճան մը կ'սփոփեմ ինքզինքս ուղ-
ղելով Ձեզի ներկայ գրութիւնս, որ պի-
տի ջանամ իբր թէ հայելիի մը մէջ ցո-
լացնել՝ պարագային վեհութեան իմ մէջ
արթնցուցած զգացումներն ու մտա-
ծումները։

Նախ. երախտագէտ սրտով փառք
կուտամ իմ Աստուծոյ՝ մեր սիրեցեալ
հովիւը տարի մը ամբողջ պահած, պաշտ-
պանած և՛ աշնուագոյն պառզկի մը պէս՝
զարգացուցած և երկնային քաղցրու-
թիւններով լեցուցած ըլլալուն համար։

Երկրորդ, նոյն շնորհապարտ զգա-

ցումներով փառք կուտամ Տէրոջը, զձեզ
ամենքդ, զիս ալ միասին, որջ առողջ
պահած՝ և իր ընտրեալ ծառային վերա-
գարծը տօնելու արժանացուցած ըլլա-
լուն համար։

Վեր. Հ. Յ. Համբարձումեանի ծանօթ
և օրինակելի համեստութիւնը չի վիրա-
ւորելու համար հոս չի պիտի ծանրանամ՝
կարճ ժամանակի մը ընթացքին, խըս-
տապահանջ երկրի մը մէջ իր ձեռք բե-
րած մտաւոր, բարոյական և հոգեւոր յա-
ջողութեանց վրայ, ինչպէս նաև հեղի-
նակաւոր աստուածաբաններու, հոգա-
կաւոր փրոֆէսորներու և երէցներու մօտ
իր վայելած անվերապահ և բարձր հա-
մակրանքին վրայ։ Այս առթիւ ինծի
թոյլ տրուի յայտնել թէ՛ մեր սիրեցեալ
հովիւին նկարագրին ու քրիստոնէական
մաքուր կենցաղին շուրջ հիւստեւած բար-
ձր գնահատականները զիս, գոնէ, երբեք
անակնկալի չի բերին, որովհետեւ ես ար-
դէն, իր երեք տարուան անձնուէր ծա-
ռայութեան միջոցին, Աստուծոյ մարդը
ճանչցած ըլլալու ներքի յաւակնութիւնը
ունեցած էի։ Եւ երջանիկ եմ որ սխալած
չեմ։

Այս առթիւ չեմ կրնար թոյլ տալ որ
անտես առնուի հետեւեալ կարեւոր պա-
րագան։ Ես չեմ գիտեր, թէ Վեր. Հ. Յ.
Համբարձումեան երբեք կամ ո՛րքան
առիթ ունեցաւ իր վարիւղ կոչուած եկե-
ղեցիին փառքովը փառաւորութեամբ Բայց
անսահման գոհունակութեամբ նկատեցի,
որ Ամերիկայի մէջ տնոր յաջողապէս վա-
րած ուսումնական ընթացքը և քրիստո-
նէական կենցաղը Գահիրէի Հայ Աւետ.
Եկեղեցւոյն համար մեծ վարկ մը չինած
են, ուրիշ խօսքով՝ քրիստոնեայ մար-
դիկ, — ամէնքն ալ մեծ անձնաւորու-
թիւններ, մեր եկեղեցին և համայնքը
բախտաւոր գտած են մեր հովիւին ան-
ձին ու կենցաղին մէջէն դիտելով զմեզ։
Արդարեւ վայելուչ է որ խորապէս երախ-
տագէտ ըլլանք Վեր. Հ. Յ. Համբար-

ծուռահանի՝ մեր ժողովուրդին շահիլ տւած այս բարձր վարկին համար :

Սրաանց գոհ ենք, անշուշտ, որ մեր սիրեցեալ հովիւը թանկագին գանձերով բեռնաւորուած և թարմ փորձառութեամբ ուղեւորուած վերադարձաւ իր եկեղեցիին ծոցը : Շատ բնական է որ ան պիտի ուզէ իր բովանդակ գանձերը տւերամաղրիկ մեր համայնքին հոգեւոր զարգացումին, ան պիտի ուզէ աւելի շատ գործ, աւելի ընդարձակ ասպարէզ, աւելի օրհնաբեր նուիրումներ իր շուրջը : Եւ մեզմէ ո՞վ, կամ որո՞նք քաջութիւնը պիտի ունենան մեր հովիւին հետ, անոր կողքին լծուելու այս օրհնեալ աշխատանքին : Եւ ո՞վ կրնայ չափել մեծութիւնն և ընդարձակութիւնը, ինչպէս նաեւ կարեւորութիւնը այդ աշխատանքին : Ամէն Աւետարական Հայ անհատ, այդ թէ կին, ծեր թէ երիտասարդ, օրինորդ թէ պատանի, պարտաւոր է վերցնել իր բաժինը այդ աշխատանքէն : Համայնքի մը կենսունակութիւնը պէտք է փնտռել անոր հոգեւորապէս աւողջ և շարունակեալ գործունէութեանը մէջ : Չաշխատողը պէտք է մեռած նկատել : Ամէն զլխու, ամէն բազուկի, ամէն սրտի, վերջապէս ամէն անձի և ամէն գանձի սպասող գործեր կան ու պիտի ըլլան միշտ :

Մէկէ աւելի անգամներ հրապարակաւ յայտնած եմ, որ մեր Բողոքական համայնքին համար մասնաւոր դեր մը վերապահած է Նախախնամութիւնը : Կը յուսամ և կ'ազօթեմ որ համայնք և հովիւ, ձեռք ձեռքի, և սիրտ սիրտի, իրենց դերին բարձրութեան վրայ գտնուին շարունակ, Աստուծոյ Թագաւորութեան ընդարձակմանը և մեր սիրելի փրկիչին անուանը փառքին համար :

Մեր սիրեցեալ հովիւին բերած հոգեւոր գանձերը և ձեռնադրութեան շնորհքը ու մեր եկեղեցիին ու համայնքին համար ստեղծուած նոր վարկը նոր պարտակա-

նութիւններու առջև կը դնեն զմեզ : Ուրշենք այս գեղեցիկ առիթը հոգեւոր վերաշինութեան թուական մը դարձնել, և մեծ դադափարականներով սպառազինուած, քրիստոնէավայել ներգաշնակութեամբ ու անընկճելի հաւատքով, վարենք մեր ընթացքը, յաղթական յաւաքի մութիւն մը ապահովելով Աստուծոյ թագաւորութեանը և փառքի նոր շրջան մը՝ Քրիստոսի եկեղեցիին :

Հանրային խղճամիտ գործիչ մը՝ որ պիտի է անձնուէր հովիւ մը, բազմաթիւ հոգեւոր պաշարուած ըլլալով, կը խորհրմ թէ գերազանցօրէն բարի, պիտի ըսեմ նոյն իսկ՝ աստուածահաճոյ գործ մը կատարած կ'ըլլայ ա՛յն քրիստոնեան՝ որ ո՛րէ է կերպով կը թեթեւցէ հովիւին հոգերն ու բեռները . ուրիշ խօսքով՝ հովիւին հետ աշխատակցել Սյգիին Տէրօջը հետ գործակցել կը նշանակէ, հետեւաբար, ինչ որ կ'ընենք հովիւին՝ նա՛խ Աստուծոյ ըրած կ'ըլլանք, յետոյ՝ մեր անձին : Այս ճշմարտութեան ճշգրիտ ըմբռնումը ոչ միայն շատ մը անտիզի՝ գլխացաւերէ պիտի ազատէ մեզ, այլ մեր հոգիներուն առջև պիտի բանայ քրիստոնէական վեհանձն նուիրումի հոգեպարար նոր հորիզոններ :

Վերջացնելու համար պիտի ուզէի նաեւ աւելցնել թէ հովիւին հանդէպ իր հօտին վերաբերմունքը պիտի նմանցընեմ ես երկնից եկեղեցիկ կապոյտը ցոլացնող յոտակ լիճի մը մօքուր ու հանդարտ մակարդակին, ա՛յնքան մօքուր և ա՛յնքան հանդարտ՝ որ ո՛րէ է մարդկային արարած պիտի խղճահարէր եղծանելու այդ մաքրութիւնը և խանդարելու այդ հանդարտութիւնը :

Տէրը եթէ դեռ թիզ մը կեանք վերապահած է ինձի, պիտի շարունակեմ այս սուհետեւ ալ իմ տկար ուսերս հոգեկան հրճուանքով արամաղրիկ մեր սիրելի համայնքին ինձի համար նշանակելիք պարտականութեանց : Պիտի խնդրեմ

միայն Ձեր աղօթքը՝ որ պատկանած եկեղեցիիս համար ունեցած նախանձախնդրութիւնս զիս ճերմակերես հանէ Աստուծոյ և մարդոց առջև:

Եղբայրական բարեներով Ձերդ անձնութիւնը՝

Յ. Թ. ԳԱՅԱԵԱՆ

ՀԱՄԻՏԻՅԷԻ ՔԷՄՓԻ ՀԱՅ ԱՒԵՏ.

ԵԿԵՂԵՑԻՆ, ՀԱԼԷՊ.

Մր. Ճ. Ս. Մարթին 1923ի գարունը տախտակէ չէնք մը շինել տուած էր Կիլիկոյ զանազան տեղերէն Հալէպ ապաստանող Հայ Աւետարանականներու կողմանէ կրթական և կրօնական նպատակներու գործածուելու համար: Հոն մէկ ուսուցիչ և երեք վարժուհիներ, 200 երկսեռ աշակերտներուն կրթութիւն կուտային և կիրակի օրերը հոգեւոր պաշտօններ կը կատարուէին: Ետքը յայտնի եղաւ որ տակաւին երկար ատեն կանգուն պիտի մնայ այս չէնքը որ առժամեայ ըլլալ կը կարծուէր: 1924ի Դեկտեմբեր ամսուն մէջ տեղացիներէ և միսիոնարներէ բաղկացեալ մասնախումբ մը կազմուեցաւ կրօնական պաշտօններուն մասնակցող ժողովուրդէն եկեղեցական անդամները սրոշելու և եկեղեցին կազմակերպելու համար:

Եկեղեցիս իր մէջ կը պարունակէ 10-12 եկեղեցիներու մնացորդները, 1600է աւելի անձեր, որոնց թէպէտ մեծամասնութիւնը կը կազմեն Այնթապցիք և Մարաշցիք: Ժողովուրդս մեծ մասամբ այրիներէ, որսերէ, ծեր կիներէ և այրերէ կը բաղկանայ: Ֆիզիքական և զբոսայտական կարողութիւն ունեցողներ չարունակ կը գողթեն դէպ ի Արեւմտք: Հետեւաբար ամէն տարի 35-40 հոգիներ կը պախտին մեր ժողովուրդէն, որուն պակասը, սակայն, զուրսէն նոր եկողներ և քաղաքէն գալով քէմփի մէջ հաստատուողներ կը լրացնեն:

Մինչև հիմա մեր եկեղեցիին կողմանէ ընդունուած անդամներու թիւն է 281, որուն 225ը կիներ և 56ը այրեր են: Ամուրի աղջիկները իթէ հանենք անդամուհիներու թիւէն՝ մնացածին մեծ մասը թիւով 96, այրի կիներէ կը բաղկանայ:

Այս եկեղեցիին պատմութեան մէջ անկարելի է չտեսնել նախախնամութեան հրաշագործ ձեռքը երբ յիտապարձ ակնարկ մը կը նետենք անոր ապրած անցեալ եօթը տարիներուն վրայ: Այս մեծ ժողովուրդին պզտիկ մէկ մասը միայն եկեղեցի կուգայ և անոր պաշտօններուն կը մասնակցի: Յաւալի է ըսել թէ մընացեալին մէկ մեծ մասը կրօնական զգացումը, հաւատքն ու պարտականութիւնները մոռցած է, հետեւաբար իրենց ֆիզիքական, բարոյական և հոգեւոր կեանքը շատ ողորմելի է: Ամուսնութեան, մահուան և նման ստիպողական պարագաներուն մէջ միայն կը ջանան յայտնել թէ այս եկեղեցիին զաւակներն են: Հակառակ այս դասակարգէ մարդերու անդորձութեան՝ մեր հոգեւոր պաշտօններն ու հաւաքոյթները կը կատարուին հոգեւոր եռանդով լեցուն, լըռիկ արթնութեան շունչով օժուէ՝ շնորհիւ յիշեալ փոքրամասնութեան անկեղծ ջանքերուն:

Գոչէճ և աղջկանց բարձրագոյն վարժարանէն ուսումնաւարտ մեր զաւակներէն շատերը դպրոցներու մէջ, Զանից Ընկերութեանց և Կ. Դպրոցներու մէջ իրենց ծառայութեամբ օգտակար կը հանդիսանան: Իսկ ոմանք Պէյրութի Ամերիկեան Համալսարանին տարբեր ճիւղերուն մէջ ուսում կ'առնեն: Մեր աղջիկներէն շատերը հիւանդապահութեամբ կ'ղբալին զանազան հիւանդանոցներու մէջ: Այս անցեալ տարուան միջոցին մեր ժողովուրդէն երկու վարժուհիներ, երկու աւետարանչուհիներ և մէկ ուսուցիչ գործած են Միութեանս Հալէպի Շրջանին եկեղեցիներուն մէջ:

Մեր գպրոցները ամէն կերպով յառաջդրմամբ են բաղ-լատմամբ անցեալ տարիներուն: Մէկ ուսուցիչ և երեք վարժուհիներով, շատ փոքր պիւտճէով եւ 200 աշակերտներով սկսած մեր գրպրոցը ներկայիս ունի 300է աւելի աշակերտութիւն մը մէկ ուսուցչի և ինը վարժուհիներու խնամքին տակ, տարեկան 350 օսմ. ոսկի (հառազ) ծախսով: Եթէ Տէրը կամի մեր եկեղեցիէն երիտասարդ մը յառաջիկայ տարի պիտի սկսի իր աստուածաբանական դասընթացքին Աթէնքի Սխոլալ Տիլիմիսի մէջ:

Մեր Զանկոյ Ընկերութիւնները, որոնք 1926ին Պատ. Ա. Հատիտեանի նախաձեռնութեամբ կազմուած և մինչեւ հիմա անոր Զանքերով շարունակած են, ապագային համար մեզի մեծ յոյսեր կը խոստանան: Ստիպեալ հետո՝ գտնուող անդամներու հետ թղթակցութիւնը կը շարունակուի օրինակ յիշուիլ ցուցնելու թէ այս ընկերութիւնները ինչ մեծ ծառայութիւններ կը մատուցանեն մեր երիտասարդներուն կեանքին մէջ:

Այս Ժողովուրդը, որ վերոյիշեալ պատճառներով միշտ զօռաբուրութեանց մէջ գտնուած և արտաքին օժանդակութեամբ իր գոյութիւնը պահած և պարտականութիւնը կատարած է, թէ՛ իր հոգեւոր կեանքին և թէ՛ իր եկեղեցական տուրքերը վճարելու մէջ իր նմաններէն ետ չէ մնացած և նոյնիսկ կրցած է ոմանց բարի օրինակ ըլլալ, ինչ որ կընայ հաստատուիլ մեր անցեալ տարուան ելեւմտական տեղեկագրով, զոր կուտանք ստորեւ. —

գրուել Մէծիտ 20 զրուշէն հաշուելով

16960	Հովիւի և քարոզիչի թոշակ
6188	Ժամկոչի տարեկան թոշակ
1372	Ընթացիկ ծախք (այս շորագում և այլն)
2364	«Հալէպ» Գոլէճի գեանին նուէր
496	«Պիթհեզթա» հիւանդանոցին
248	Մամլթէյնի հիւանդանոցին

506	Աւետարանչուհի Օր. Բոնըրի
253	Գոլէճի մէջ աղքատ ուսանողի մը
310	«Բահնիւմա»ի նուէր
310	Ամերիկեան և Անգլ. Ս. Գրքի Ընկ. եանց
2894	Ներքին Աւետարանչական Յանձնարար

8113 աղքատներու

40,014 Ընդհանուր գումար

Ասկէ կը հետեւի թէ բեմի տրուած գրամին մէկուկէս անգամէն աւելին, 23054 զրուշ, ծախսուած է բեմէն զատ ուրիշ նպատակներու: Վերոգրեալ գումարին մէջ չէ գրուած գպրոցին տրուած 84 Օսմ. ոսկին և նոր կառուցուելիք եկեղեցական շէնքի գեանին համար տըրուած 30 Օսմ. ոսկին: Այս վերջին նրկու գումարները, $84 + 30 = 114$, արծաթ գրամի վերածուելով կ'ըլլան 50840 զրուշ: Որով ընդհանուր եւքը կը հաւասարի 90,357 զրուշի կամ 302.86 Օսմ. ոսկիի:

Վերոգրեալ գումարներու հանգանակութեան մասին կուտանք հետեւեալ ուշագրաւ ծանօթութիւնները. —

1. Իբր հոգեւոր տուրք գանձուած գումարին մէջ կրնորու վճարած մասը այրերու տուածէն 3128 զրշ. աւելի եղած է: Կրնորը հոգեւոր տուրքի մատուորապէս երեք հինգերորդը վճարած են:

2. Եկեղեցական շէնքի գեանին համար եղած հանգանակութեան մէջ ալ պարագան նախկինէն շատ տարբեր եղած չէ: Այս նպատակի համար շատեր իրենց ականջի օղերը, մատանիները, ձեռագործները նուիրած են, որիչ շատեր իրենց օրական ապրուստէն կտրելով տուած են: Մակեդոնիոյ եկեղեցիներուն մէջ Աստուծոյ ըրած շնորհքը նոյնութեամբ և առատօրէն այս աղքատ եկեղեցիին մէջ տեսնուած է (Ա. Կորն. 8. 1—4): Այրի և անօգնական կրնորու Աստուծոյ տունին հանդէպ ցուցուցած

այս սէրը և գոհողութիւնը առաքելական դարը մեղի կը յիշեցնեն:

Եկեղեցիին մասին կարգ մը ընդհանուր ծանօթութիւններ:

1. Մեր ժողովուրդը, եկեղեցիիս կապուած ժողովուրդը ընդհանրապէս կը կազմեն տարագրութենէ և ջարդէ վերայրած բնկորներ, որոնք 45 տարեքէն վեր ծերեր, իրենց մարմինները մաշած մարդեր կամ 25 տարեքէն վար երիտասարդներ և մանուկներ են: Եւ եթէ 25-45 տարեքներուն միջև սակաւաթիւ երիտասարդներ ալ գտնուին, անոնք եկեղեցիին բարեկամ եղող դասակարգէ չեն:

2. Վերայիշեալ պատճառներով մեր ժողովուրդին մէջ շատ քիչ թիւով փորձառու և կարող մարդեր կան եկեղեցական գործերը վարելու համար. և անոնք ալ իրենց ժամանակը այսպիսի գործերու յատկացնելու ի վիճակի չեն:

3. Մեր այն երիտասարդները և երիտասարդուհիները, որոնք դպրոցներու և «Ջանից», ընկերութիւններու մէջ կը պատրաստուին իրր ասպագայ հասարակական գործիչներ, ներկայ պայմաններու տակ անկարող կ'ըլլան եկեղեցիին օգտակար ըլլալու և անոր կապուելու, ստիպուած ըլլալով ուրիշ տեղեր գաղթելու: Անոնք իրենց դացած տեղերուն մէջ թէպէտ օգտակար կը հանդիսանան սակայն մենք անոնց ծառայութենէն զրկուած կ'ըլլանք:

4. Այս եկեղեցիին՝ գաղթականական հոծ վանգուածի մը մէջ կազմակերպեալ յարանուանութեան մը ծառայելէ աւելի բոլոր Հայութեան մտաւորական, բարոյական և հոգևոր պէտքերուն ծառայած է: Եւ շատեր որոնք այս եկեղեցիին նըպատակին մասին առաջ տգէտ մնացած էին, մեր դպրոցներուն և հոգևոր պաշտամունքին միջոցաւ այդ մասին տեղեկանալով, մեծապէս մեր եկեղեցիէն օգտուած, նոր բաներ սորված և մխի-

թարուած են: Շատ ուրախ ենք որ մեր երկնային Հայրը մեզի առիթ տուած է այս մեր թշուառ ազգին ծառայելու: Փառք Անոր անճառելի շնորհքին համար:

(Վեր.) Կ. Բէթէնձեան

ՀԱՄԱՐՈՒ ՆՕԹԵՐ

(Վեր. Մ. Կ. Փախագեանի)

ՀԱՅԵՐ ՖՐԱՆՍՍԵՅԻ ՄԷՋ*

Փարիզի մէջ 20,000 Հայեր կան. հոս առիթը ունեցայ այցելելու Հայ թերթերու խմբագրատունները, ղեկավար շրջանակները. երկու անգամ տեսակցեցայ Տիար Վահան Մալէգեանի, Հ. Բարեգործական Ը. Միութեան Ա. գլխիին հետ, և ստուգեցի թէ այս թիւը ճիշդ է: Իսկ Մարտիկոյ մէջ նոյնպէս 20,000 Հայեր կան. ֆրանսաբնակ բոլոր Հայ գաղթականներու թիւն է 50,000: Ֆրանսան բարոյական տեսակէտէ վտանգաւոր վայր մըն է: Ուրախայի մէկ պարագան սա է թէ բոլոր Հայ գաղթականները գործարաններու կամ աղարակներու մէջ կը գործեն. կիները օրական 15-20, իսկ տղերքը օրական 22-25 ֆրանգ վարձք կ'ստանան, որով չոր հաց մը կ'ուտեն: Ասոնց սպրեւակերպը ինչ ինչ կէտերու մէջ փափաքելի չէ, հոս տեսայ այնպիսի պայմաններ որոնց չհանդիպեցայ Յունաստանի մէջ: Մէկ սենեակի համար ամսական 100—150 ֆրանգ վարձք կուտան:

Հայց. եկեղեցիին գեղեցիկ շէնքերունիւ՝ Փարիզի մէջ հանգուցեալ Ռուսահայ միլիոնատէր Մանթաշօֆի նուիրատուութեամբ և երեք միլիոն ֆրանգ ծախքով գեղեցիկ եկեղեցի մը կառուցուած է: Մարտիկոյ մէջ նոր շէնք մը

* Խօսուած Սուրբոյ Աւետ. Միութեան տակ հիմն ժողովին մէջ, Պէյրուս 24—4—50 ին, Ծ. Խ.

աւարտելու վրայ է, որուն համար Տիար Խորասանճեան իր քսակէն երկու միլիոն Ֆրանկ ծախսած է և 4—5 հարիւր հազար ալ պիտի ծախսէ:

Հայ Աւետ. համայնքը իրեն սեպհական մէկ շէնք ունի միայն՝ էսին քաղաքին մէջ. ասոր համար 1400 Տուար ծախսուած է: Աւետարանականները օրինակելի բարեփոխութեամբ իրենց շէնքը կը տրամադրեն իրենց Առաքելական եղբայրներուն կրօնական պաշտօն կատարելու:

Փարիզի շրջանին մէջ կը գործէ Տիար Պաւստական գործակցութեամբ երկու աւետարանչուհիներու, որոնք են Օր. Հայկանուշ Յակոբեան և Օր. Վիտրման: Սա վերջինը հայասէր և անկեղծ հաւատացեալ կ'ընէ: Լիւնի Աւետ. եկեղեցիին մէջ կը գործէ Տիար Եոսէփ Պարսուսեան աշխատակցութեամբ իր կնոջ և Տիար Լեոն Նիկողոսեանի: Այս եկեղեցիին մէջ հոգեւոր տաքուկ մըթնոլորտ մը կայ: Վալանսի մէջ կը գործէ Տիար Սահակեան, իսկ Փօնթօպիէի մէջ՝ Առաքել Փափազեան, որ հոգեւոր եռանդով լեցուն երիտասարդ մըն է:

Հայ Աւետարանականութեան ամենակարեւոր կեդրոնը Մարսիլիա է, ուր 150 Աւետ. ընտանիքներ գեղեցիկ եկեղեցի մը կազմած են, որուն նոր ձեռնադրեալ հովիւն է Վեր. Յ. Ղազարոսեան: Ֆրանսայի Հայ Աւետարանականութիւնը հովանաւորութիւնը կը վայելէ Ախիօն Բրեթիէն ընկերութեան, որուն նախագահը Տր. Փօլ Պէրոն շատ գեղեցիկ մարդ մըն է. իր թոշակը իր եկեղեցիէն առնելով բոլորովին այս գործին նուիրուած է: Ֆրանսացի հովիւներ մասնաւորապէս ուշադրութեամբ կը հսկեն այս գործին:

Ուրախալի է տեսնել թէ Ֆրանսայի Հայ Աւետ. եկեղեցիներուն եւ անհատներուն մէջ հոգեւոր ջերմեռանդութիւն կայ, զոր կը հազորդեն նաեւ ի-

րենց ժողովուրդներուն: Այդ անյուսալի վայրերու մէջ կենդանի հաւատք կայ: Հոգեւոր արթնութիւնը կրնայ թէ՛ օգտակար և թէ՛ միասակար ըլլալ. ինչպէս արթնութիւնը տեւական ջերմեռանդութիւն և տաքութիւն է, մեր մարմինն մէջ շրջան ընող արեան տաքութեան նման, վայրկեանական ջգածգային նոպաները վստահելի չեն:

Ձեռ գիտեր թէ կրցա՞յ անոնց բան մը տալ, բայց գիտե՞մ որ անոնցմէ առիւթ արսիլիայէն մեկնելէս առաջ միատեղ եկանք, շատ յուզումնալից էին մեր տեսակցութեան վերջին վայրկեանները: (Եւ հոս Վեր. Մ. Փափազեան կարգաց Պօղոսի Եփեսոսի եկեղեցիին հետ վերջին արտօսարարի տեսակցութիւնը պատմող հատուածէն, Գործ. 20, 17-38.) Արցունքներու տեսակներ կան, տառապանքի արցունք կայ, զղումի արցունք կայ և կարեկցութեան արցունք կայ: Ս. Հոգին իր շնորհները երբեմն ուղղակի կերպով և երբեմն ուրիշներու միջոցաւ մեզի կուտայ: Հետեւաբար Աստուծոյ հետ և մարդերու հետ մեր հաղորդակցութեան անցքը միշտ պէտք է բաց մնայ. ուէ մէկուն հանգէպ քու մէջդ ատելութիւն պէտք չէ ըլլայ: Մեզմէ ամէն մէկը պէտք է Բրիտանոսի յանձնուի, իմ և քու մէջդ «ես»ը պէտք չէ մնայ:

Նօթագրեց՝ Տ. Ծ. Խ.

Առանց աղօթքի, և առանց աղօթքի բերած յոյսի և հաւատքի, ես չեմ կարծիր որ վերջերս լինծի վիճակած շատ մը մօտ թրերը կրնայի ապրիլ:

ՍԸՐ Հ. ԼՕՏԸՐ

Կրօնքը կեանք մըն է, հետեւաբար մեծնալ անոր օրէնքն է. կրօնքը Աստուծոյ վրայ ուղղուած ուշադրութիւն մըն է, հետեւաբար պաշտումը անոր բարձրագոյն կէտն է. կրօնքը ընկերութեան մը մէջ մտնել կ'ենթադրէ, հետեւաբար ընկերակցութիւնը անոր նշանն է սրբութիւնը անոր կոչումն է:

ՏՐ. Տ. ՅՐԷԹՂՐ

ԱՅԼԵՒԱՅԼ

ԽԵՉ Է ԲՈՂՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Յայտնի Անգլիացի կաթողիկ հրապարակագիր Մր. Չէսթըրթըն «Բողոքականութեան վերջին փուլը» նկարագրելով կ'ըսէ. «Բողոքականութիւնը Բողոքական վարդապետութեանց լքումը եղած է. անիկա քանդումը եղած է բոլոր այն բաներուն զորոնք քանդողները իրենք ընտրած էին իբր անհրաժեշտ տարրեր փրկութեան համար... Զոհուելիք վերջին բանը Բանականութեան գործածումն է:»

The Christian word թիւթը ասոր պատասխանելով կը գրէ:

«Բողոքականութիւնը առումով մը, շիտակ է որ բողոքական վարդապետութեանց լքումը եղած է: Անոր պաշտօնը վարդապետական դրութիւն մը չինել եղած չէ, այլ Անձի մը յայտնութիւնը: Անոր բոլոր պատմութիւնը եղած է վարդապետութեան անվախ քննութիւնը, և մասնաւոր վարդապետութեանց պաշտպանութիւնը կամ լքումը՝ Քրիստոսը յայտնելու մէջ իրենց ընձեռած ծառայութեան համեմատ: Գաղով բանակապետութեան գործածումը զոհելու մասին՝ բոլոր ըսուելիքը միայն սա է, թէ Բողոքականները բանականութիւնը կը գործածեն միջեւ հոն ուր աստուածաբանութիւնը կը վերջանայ և կրօնքը կ'սկսի և այս է վէճի առարկայ բուն հարցը: Արդի Բողոքականութիւնը աստուածաբանութիւնը կը նկատէ գիտութիւն մը և մտածումի մարդ մը որ գիտութեան գիւտերուն վրայ հիմնուած է: Բայց անիկայ կրօնքը կը նկատէ կեանք մը, ապրում՝ Քրիստոսի ընկերակցութեամբ և Աստուծոյ հետ կարելի ամենասերտ հաղորդակցութեամբ: Եւ երբ կրօնքը կեանք մըն է, ասկէ կը հետեւի որ գոյութեան իրաւունք տուող վերջ-

նական համոզիչ պայմանը կեանքին որակը, վիճակն է: Անիկայ բանականութեան գործածումը զոհելու խնդիրը չէ: Անիկայ տրամաբանութիւնէն աւելի կեանքին վրայ հիմնուած բանականութիւնը գործածելու հարց մըն է:»

ՀԻՒԱՆԴ ՅԵՂ ՄԸ

Մենք այնպիսի սերունդի մը մէջ կ'ապրինք, որ յառաջդրմական քայլերով մեզ շրջապատող նիւթական տիեզերքը կը նուաճէ, և ամէն կողմ իր այս յաղթանակին յիշատակարանները կը կանգնէ:

Ներկայ սերունդը ինքզինքը շրջապատած է այնպիսի հանգստի դիւրութիւններով և պերճանքներով, որոնք իշխաններու երազները կը գերազանցեն: Երբ մարդ միայն անգամ մը արդիական մեծ գործարան մը մտնէ և մարդուն ստեղծած մեքենաները դիտէ պատկառանքով և հիացումով կը լեցուի: Հակառակ այս բոլորին մեր ցեղը հիւանդ ցեղ մըն է, քանզի անիկայ բոլոր աշխարհը շահելով իր հոգին կորսնցնելու վտանգին մէջ կը գտնուի: Մարդուն իր իսկ ըրած քաջագործութիւնները մարդկութեան վրայ այնպիսի պահանջներ դրած է որ զայն յոգնած, զրգուհալ և ջգայնոտ վիճակի մը մասնած են: Մարդը այսօր իր հնարած մեքենաներուն եւ շինած քաղաքներուն կողմէ ճգնուելու վտանգին մէջ կը գտնուի: Կրնայ պատահիլ որ մեր ներկայ քաղաքակրթութիւնը իր իսկ զրկած ինչքերուն մէջ խեղդուելով մեռնի:»

ՎԵՐ՝ ՈՒ. ՓԻՔԷԹ

ՆԻՅՐ ԻՍԹ ԲԻԼԻՖ ԵՒ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ

«Սիոն» իր 7-8-9 միապեալ թիւին մէջ կը հրատարակէ Անթիլիասի մէջ հաստատուելիք Կաթողիկոսարան—Ուսումնարանի մասին Նիյր Իսթ Բիլիֆի և Կի-

լիկիայ Կաթողիկոսութեան միջև ստորագրուած պայմանագրին կարեոր մէկ մասը: Ինչպէս ծանօթ է արդէն Անթիլեասի շէնքերը Նիյո Իսթի կը պատկանէին:

«Պայմանագիրը անգլիկներէն է և կը բաղկանայ ութը յօդուածներէ, որոնցմէ կ'ամփոփենք հետեւեալները:

Յօդ. 2. Վարձակալութիւնը հինգամեայ է, 1930 Յուլիս 1 էն մինչև 1935 Յունիս 30: Եթէ վարձակալը ուզէ երկարել այս պայմանաժամը, պէտք է որ իր փափաքը յայտնէ այդ մասին, ապահովագրեալ նամակով մը, պայմանաժամին լրանալէն երեք ամիս յառաջ:

Յօդ. 3. Վարձակալը կը խոստանայ որ շէնքերը բացարձակապէս պիտի գործածուին կաթողիկոսարանի և դպրոցի համար, ուր պիտի պատրաստուին եկեղեցականներ և ուսուցիչներ, հետեւալ պայմաններով.

ա) Դպրոցը պիտի վայելէ օժանդակութիւնը Յանձնաժողովի մը որ կազմուած է Նիւ Եորքի մէջ Նիյո Իսթի և Ամերիկայի Հայոց ներկայացուցիչներէ:

բ) Դպրոցին վերատեսուչը և ուսուցչական մարմինը պիտի նշանակուի Վեհ. Կաթողիկոսի կողմէն և պիտի հաստատուի Նիւ Եորքի Յանձնաժողովի կողմէն:

գ) Երկու կողմէն կ'որոշեն դպրոցը բանալ յառաջիկայ աշնան:

Յօդ. 4. Դպրոցի բացումէն առաջ անոր վարչական մեթոդին, առարկաներուն և ուսմանց ծրագրին համաձայն մէկ վաւերագիրը պիտի պատրաստուի Ն. Ս. Օժութեան Սահակ կթղի. կողմէն, խորհրդակցութեամբ Աթոռակից Գեր. Տ. Բաբգէն Եպիսի., Գեր. Շահէ Ծ. Վրդ. Դառպարեանի, և պիտի զրկուի վերոյիշեալ Յանձնաժողովին:

Թէ՛ շէնքերու գործածութեան, թէ՛ Նիւ Եորքէն ապահովուած նիւթական օժանդակութեան տեսականութիւնը կ'ստանայ է ծրագրին համեմատ ձեռք

բերուելիք արդիւնքէն և ազդուութենէն:

Յօդ. 5. Տարեկան վարձքը մէկ տար է:

Յօդ. 6. Վարձակալը պարտաւոր է լաւ վիճակի մէջ պահել կալուածը. ոչ մէկ ծառ պիտի կտրուի, ո'չ ալ ունէ փոփոխութիւն պիտի կատարուի շէնքերուն վրայ առանձ կալուածատիրոջ հաւանութեան:

Յօդ. 7. Վարձակալը իր վարձակալութեան շրջանին պարտաւոր է վճարել կալուածատուրքը, ինչպէս նաեւ գոհացում տալ կառավարութեան կամ քաղաքապետութեան պահանջներուն:

Յօդ. 8. Վարձակալը կրնայ ապահովագրել կալուածը:

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

ԼՈՒՐԵՐ ՍԵԼԱՆԻԿԷՆ

Պատ. Կ. Ս. Ֆարաճեան, որ այս տարուան համար Սելանիկի Եկեղեցիին հովուութեան պաշտօնը ընդունած է մեզի կը գրէ. —

Ժամանակին Յունաստան ապստանող տարագրեալ Հայ Ազգի բեկորներէն ափ մըն ալ այս պատմական քաղաքին մէջ տեղաւորուած է:

Ընդհանուր պատերազմէն առաջ՝ արդէն հոս գտնուող յիսունի մօտ Հայ Առաքելական ընտանիքներ սեպհական եկեղեցի մը շինել տուած են բարերախտաբար: Եէնքը՝ իր առաջնորդարանով միառեզ, թէպէտ փոքր բայց սիրուն է և կը ծառայէ Սելանիկ գտնուող 6-7000 Հայերու: Մայր Եկեղեցին տեղաւորուած է գրեթէ քաղաքին սիրտը և ունի հինգ քահանաներ, որոնք կը կատարեն եկեղեցական արարողութիւնները և կ'աշխատին հովուելու հեղեւորապէս քաղաքին մէջ տարածուած ժողովուրդը:

**

Հայ Աւետարանական Եկեղեցիին կազմուած է 1923ին, հոս ապաստանող Աւետ. գաղթականներու միջոցաւ՝ իբր հովիւ ունենալով Վեր. Վարդան Երանեանը։ Հոգևոր պաշտօնները կը կատարուին քաղաքի մէջ գտնուող Յոյն Աւետարանականներու սեպհական շէնքին մէջ։

Վեր. Երանեան՝ մինչև 1929ը շարունակած է իր հովուական պաշտօնը՝ աշխատելով գոհացում տալու ժողովուրդի ծովածաւալ կարիքներուն։ Նոյն տարուան Օգոստոսին կը հրաժարի ու կը մեկնի Ամերիկա, Օպերլին ուսանելու համար։ Եկեղեցիին հոգաբարձութեան միջոցաւ բեմը կը կառավարուի։ Այս վերջին տարին Վեր. Կ. Սթամպուլընեան մերթ Եւրթ քաղաքս այցելելով կը կատարէ հովուական պարտականութիւնները։ Երջիկ քարոզիչ Պատ. Գայտեան նաեւ մի քանի ամիս կ'աշխատի հոս մասնաւոր կարգադրութեամբ։ Իսկ Վեր. Մ. Կ. Փափազեան շարաթ մը կը քարոզէ խուռն բազմութեան։

Անցեալ տարիներու ընթացքին՝ Վեր. Երանեանի ըրած արձանագրութիւններէն կը քաղենք հետեւեալ տեղեկութիւնները։

1923ին արձանագրուած Հայ Աւետ. ընտանիքներու թիւն է 130, մօտաւորապէս 650 հոգի։ Այս թիւին մէկ վեցերորդը միայն եկեղեցիի անդամներ են։

Մինչև հիմա 16 անգամ մատակարարուած է Հաղորդութեան սրբ. արարողութիւնը, 73 երախաներ մկրտուած են, 80 նոր անդամներ առնուած են, 24 պրսակ կատարուած է, 25 ընտանիքներ քաղաքէս մեկնած են զանազան վայրեր եւ 19 հոգի մեռած են։

Խիստ քաջալերական է այս գաղթական ժողովուրդէ կազմուած եկեղեցիին առատաձեռնութեամբ վճարած հոգեւոր տուրքը։ Ասոնք հոս՝ օտար հոգի վրայ,

իրենց յարուստը կը հանեն դժուարութեամբ, միեւնոյն ատեն որբեւարիին նման մեծագոյն պարտականութիւնը կատարելու փափաքով իրենց մինչև այսօր նուիրած լուսաները 1500—տուար եղած են։

Ներկայիս եկեղեցին չունի իրեն յատուկ պէտք եղած կազմակերպութիւնները։ Զեռնարկուած է նախապատրաստութեան մօտ օրէն զանոնք կազմակերպելու նպատակաւ, ինչպէս նաեւ նոր վիճակադրութեան։

Սեղանիկ

Կ. Ս. ՖԱՐԱՃԵԱՆ

ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅ ԱՒԵՏ. ԵԿԵՂԵՑԻՆ կը տօնէ իր հովիւին վերադարձը, որուն մասին կը գրուի հետեւեալը. —

Ինչպէս արդէն շատերուն ծանօթ է, Գահիրէի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ քարոզիչը՝ Պատ. Հ. Յ. Համարձումեան, անցեալ տարի Ամերիկա մեկնած էր. տարի մը ուսանելու համար Օպերլինի Աստուածաբանական ճեմարանը։ Յիշեալը յաջողութեամբ իր ուսումը աւարտելէ և Նիւ Եորքի Հայ Աւետ. Եկեղեցւոյ նախաձեռնութեամբ հովիւ ձեռնադրուելէ վերջ, զէպի Գահիրէ ճամբայ ելած և Օգոստոս 24ին Աղէքսանդրիա ժամանած է։

Գահիրէի Հայ Աւետ. Եկեղեցւոյ կողմանէ հինգ հոգիէ բաղկացեալ պատուիրակութիւն մը, Աղէքսանդրիոյ նաւահանգիստը զինք գիմաւորած է և անոնցմէ ոմանք իրեն ընկերանալով, Օգոստոս 21ի կէսօրին Գահիրէ վերադարձած են։ Համայնքէն խուռն բազմութիւն մը կայարանը շտապած՝ անձկանօք կ'սպասէին կառավարման հասնելուն։

Նոյն իրիկունն իսկ Եկեղեցւոյ՝ Եկեղեցական և Քաղաքական ժողովներու նախաձեռնութեամբ հանդէս մը սարքուած է, որուն ներկայ ըլլալու հրաւիրուած էին Եկեղեցւոյ բոլոր ընտանիքները։

Հոկառակ շատերուն օղափոխութեան գացած ըլլալուն՝ մօտ 150 հոգի ներկայ գտնուեցան այն հանգէտին, որ տեղի ունեցաւ, արմաւենի ճիւղերով և ծաղիկներով զարդարուած եկեղեցիի բակին մէջ:

Հանգէտին նախագահը Տիրար Ա. Գաւրամահեան, ներկաներու կողմանէ Վեր. Հ. Յ. Համբարձումեանի բարիգալուստ մաղթելէ և իր շրջանաւարտութեան և ձեռնադրութեան առթիւ զինք շնորհաւորելէ հետքը, կարգաց այդ ուղերձը՝ զօր նիւ եորքի Հայ Աւետ. Եկեղեցւոյ հովիւը Վեր. Պետրիկեան ուղղած էր ձեռնադրութեան պաշտամունքին, նորընծայ հովիւին: Յետոյ կարգացուեցաւ Փրօֆ. Յ. Թ. Գայանեանի կողմանէ գրուած և Ազէքսանդրիայէն ղրկուած գեղեցիկ ուղերձ մը:

Երգեցողութենէ և նուագներէ վերջ, ներկաները հիւրասիրուեցան պաղպաղակով և կարճ դադարէ մը վերջ, առիթ տրուեցաւ Վեր. Հ. Յ. Համբարձումեանի արտայայտուելու: Յիշեալը հազիւ կարենալով զօպել իր յուզումը, իր խորունկ շնորհակալութիւնները յայտնեց, իրեն հանգէտ յոյց տրուած սիրոյ և յարգանքի համար և ըսաւ թէ այս բոլոր պատիւները Տիրոջ համար են և ոչ թէ իրեն համար: Մէջ բերաւ Սատու Սունտար Աինկի այն խօսքը՝ որու մասին ինքը կատարելապէս համամտ էր, թէ՛ «ես էջ մըն եմ Քրիստոսը իմ կռնակիս վրայ կրող, և բոլոր այդ պատիւները որ իշուռն կ'ըլլան, Տիրոջը համար են»: Յետոյ Քրիստոսով՝ Աստուծոյ անհուն սիրոյ մասին խօսելով, կէս ժամ առինքնեց իր ունկնդիրները:

Նախագահը վերջին անգամ խօսք տուելով, պահարանի մը մէջ իրեն յանձնեց զբամական նուէր մը, ի յիշատակ ներկաներու սիրոյն և յարգանքին, որ պիտի յատկացուէր իր սիրած գիրքերու գնումին:

Վեր. Հ. Յ. Համբարձումեանի՝ ալ աւելի յուզումնալից շեշտերով արտայայտած շնորհակալութիւններովը և իր գոհարանական ազօթքովը հանգէտը փակուեցաւ կէս զիշերին մօտ: Ներկաները բաժնուեցան, ուրախութեան և գոհունակութեան խոր տպաւորութիւններով:

ՆԵՐԿԱՅ ՄԸ

ՍՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ընտրութիւնը պիտի կատարուի Հոկ. 26ին էջ Միածնայ մէջ, մասնակցութեամբ գաղութահայութեան և Հայաստանի կրօնական և աշխարհական պատուիրակներուն:

ԳԲՐԸԳԻՍԱՆԻ Հայ Աւետ. Եկեղեցին սկսած է իր միայնակ ընդարձակ դպրոցական շէնքի շինութեան: Պատրաստ գումարը կանխատեսուած 60000, ծախքին հազիւ մէկ հարրոգին կը հաւասարի. կը յուսան արտաքին օգնութեամբ շէնքը լրացնել: Շնորհակալութեամբ պիտի ընդունին ուէ նուէր մը:

«ՀԱԼԷՊ» ԳՈԼԷՃԻ նոր գետինն մէջ ձեռնարկուած էր ջրհոր մը փորել: Ուրախալի է որ 10 ամիս անընդհատ աշխատելէ և 250 ոտք փորելէ վերջ առատ ջրոյ գտնուած է:

ՔԷՍԱՊԻ ՀԱՅ ՍԻՆՏ. ԵԿԵՂԵՑԻԻ նոր հովիւը Վեր. Ե. Քասունի Կ. Պոլսէն ընտանեօք Սեր. Յին ճամբայ ելած է գէպի Սուրիա, ուսկից ուղղակի Քէսապ պիտի ուղեւորի:

ԱԶԷԶԻ ՄԷՋ շատ մը հալէպարնակ հայեր ամառը անցընելու համար Ազէզ գացած են: Փոքրաթիւ Հայ Աւետ. համայնքին կիրակնօրեայ պաշտօններուն մէջ 70-80 հոգի ներկայ գտնուած են, իսկ մանկանց կիրակնօրեայ դպրոցին մէջ 40-50 մանուկներ:

صاحب الامتياز و مدير المسئول

قسيس قوهبت هاروتونيان